

ԱՐՏԱՇԷՍ Ի-Ի ՎԱՐՉԱ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱՒՈՐՈՒՄԸ

Յակոբ Յարութիւնեան

Հայ ժողովուրդն իր բազմադարեան պատմութեան ընթացքում ունեցել է մեծ թուով նշանաւոր գործիչներ, որոնք կարեւոր դեր են խաղացել մեր երկրի պետական-հասարակական կեանքում: Այդպիսի դէմքերից է Արտաշէս Ա-ն (թագաւորել է Ք.ա. 189 - մօտ 160 թթ.): Նա ոչ միայն մէկ պետութեան մէջ միաւորեց հայկական տարածքների մեծ մասը, այլեւ վերականգնեց Մեծ Հայքի թագաւորութիւնը: Նա նաեւ դարձաւ թագաւորական նոր տոհմի՝ Արտաշիսեանների հարստութեան հիմնադիրը, որի ներկայացուցիչներից Տիգրան Բ Մեծը՝ Արտաշէսի թոռը, շարունակելով իր պապի գործը, կարողացաւ Մեծ Հայքը վերածել աշխարհակալ տէրութեան: Արտաշէսի գործունէութեան սկզբի վերաբերեալ տեղեկութիւններ համարեա չեն պահպանուել: Յայտնի է միայն, որ նա սերել է Երուանդունիների տոհմից, ծառայել է Սելեւկեանների թագաւորութիւնում՝ որպէս զօրավար (strategos) Անտիոքոս Գ Մեծի (Ք.ա. 223-187 թթ.) մօտ, եւ հէնց վերջինիս անմիջական յանձնարարութեամբ էլ Արտաշէսը Հայաստանում տապալել է Երուանդունիների արքայատոհմի վերջին ներկայացուցչին՝ Երուանդ Դ-ը Վերջինին (220-201 թթ.), որն իր քաղաքականութեամբ առաջ էր բերել հայկական աւագանու ծայրայեղ դժգոհութիւնը: Գրեթէ նոյն ժամանակ էլ Ծոփքում, կրկին Անտիոքոսի յանձնարարութեամբ, Զարեհի կողմից գահընկեց է արուել Քսերքսէս արքան: Այսպիսով, Արտաշէսը Մեծ Հայքում, իսկ Զարեհը՝ Ծոփքում, նշանակուեցին որպէս ստրատեգոսներ(կառավարիչներ)՝ գտնուելով Անտիոքոս Սելեւկեանի գերագոյն իշխանութեան ներքոյ: Վերոյիշեալ երկու ստրատեգոսութիւններից բացի, նոյն այս ժամանակ կային նաեւ հայկական երկու թագաւորութիւններ՝ Փոքր Հայքի եւ Կոմմագէնէի պետութիւնները:

Արտաշէսի եւ Զարեհի Հայաստանում եւ Ծոփքում իրականացրած ձեռնարկումների վերաբերեալ պատմիչ Ստրաբոնը վկայում է. «Պատմում են, որ Արմենիան եղել է առաջ փոքր եւ մեծացել է Արտաքսիասի (Արտաշէսի – Յ. Յ.) եւ Զարիադրէսի (Զարեհի – Յ. Յ.) ձեռքով, որոնք նախապէս Անտիոքոս Մեծի զօրավարներն էին եւ նրա անկումից յետոյ թագաւորեցին՝ մէկը Ծոփքի, Ակիսէնէի, Օդոմանտիսի եւ մի քանի այլ գաւառների վրայ, իսկ միւսը՝ Արտաշատի շուրջը գտնուող երկրի վրայ»[1]: Այսպիսով, մինչեւ Ք.ա. 189 թ. նրանք կառավարում էին իրենց տարածքներում՝ որպէս Անտիոքոսի ստրատեգոսներ, այսինքն՝ գտնւում էին վերջինիս գերագոյն իշխանութեան ներքոյ: Ք.ա. 190 թ. շրջադարձային նշանակութիւն ունեցաւ վերոյիշեալ երկու հայկական ստրատեգոսութիւնների՝ Մեծ Հայքի եւ Ծոփքի համար: Այդ թուականին Փոքր Ասիայում գտնուող Մագնեսիա բնակավայրի մօտ տեղի ունեցած ճակատամարտում՝ Սելեւկեանների եւ Հռոմէական հանրապետութեան բանակների միջեւ, Անտիոքոսը կրեց ջախջախիչ պարտութիւն, իսկ նրա տէրութիւնը յայտնուեց կաթուածահար վիճակում՝ ապրելով տեւական հոգեվարք: Միայն այս պահից սկսած՝ Արտաշէսն ու

1 *The Geography of Strabo*, (Loeb Classical Library), London 1960, XI, 14, 5.

© National Library of Armenia

Զարեհը դիմեցին վճռական քայլերի, ուստի եւ Ք.ա. 189 թ. շրջադարձային հանդիսացաւ հին հայոց պետականութեան պատմութեան մէջ: Վերոյիշեալի, ինչպէս նաեւ 189 թ. յետոյ կատարուածի վերաբերեալ կրկին վկայում է Ստրաբոնը՝ գրելով. «Սրանք (Արտաշէսն ու Զարեհը – Յ. Յ.) ընդարձակեցին իրենց երկրների սահմանները եւ գրաւեցին շրջակայ ժողովուրդներից հետեւեալ շրջանները. մեդիացիներից՝ Կասպիանէն, Փաւնիտիսը եւ Բասորոպեդէան, իբերներից՝ Պարիադրէսի լեռնալանջերը, Խորզէնէն եւ Գոգարէնէն, որ գտնւում է Կուր գետի միւս կողմում, խալիբներից եւ մոսսինոյկներից՝ Կարենիտիսը եւ Դերքսէնէն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիլիսենէն եւ Անտիտաւրոսի կողմերը գտնուող երկիրը եւ ասորիներից՝ Տամոնիտիսը...»[2]: Ինչպէս տեսնում ենք, պատմիչը իրար յետեւից թուարկում է մէկ տասնեակից աւելի երկրամասերի անուններ: Անշուշտ, առանց մարտունակ եւ լաւ կազմակերպուած բանակի առկայութեան, անհնարին կը լինէր իրականացնել տարածքային այս վերամիաւորումները:

Մեր պետականութեան դարաւոր պատմութեան ընթացքում բանակ, բնականաբար, ունեցել են ե՛ւ ուրարտական, ե՛ւ Երուանդունի թագաւորները: Առաջին վկայութիւններից մէկը, որ վերաբերում է հին հայկական բանակին, առնչւում է Արամ նահապետի անուան հետ: Նրա առթիւ Խորենացին գրում է. «Այս Արամ, սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց եւ Նինուէի, նեղեալ յազգացն, որ շուրջ զիւրեաւ՝ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց եւ աղեղնաւորաց, եւ որք ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք եւ հարուստք յոյժ եւ յաջողաձեռնութիւն իսկ, եւ երեսաւորք ի սիրտ եւ ի պատրաստութիւն պատերազմի, իբր թէ բիւրս հինգ»[3]: Զխորանալով Արամի ով լինելու հետ կապուած հանգամանքների մէջ, որն այս պարագայում դուրս է մեր հետազօտութեան շրջանակներից՝ պէտք է միայն նշենք, որ այդ մօտաւորապէս 50.000-ից զատ, նա պէտք է ունենար նաեւ այլ տեսակի զօրքեր, եւ դա իր քանակով այն ժամանակների համար շատ մեծ թիւ էր կազմում:[4] Երուանդունիների բանակի կապակցութեամբ ուշադրաւ են յոյն պատմիչ Քսենոփոնի հաղորդումները: Իր «Կիւրոպեդիա» ստեղծագործութիւնում նա նախ խօսում է հայկական զօրքի կէսի՝ 4.000 հեծելազօրի եւ 20.000 հետեւակի վերաբերեալ, իսկ հետագայում տալիս է ամբողջական կազմը, այն է՝ 8.000 հեծեալներ եւ 40.000 հետեւակայիններ:[5] Այս վկայութիւնների պարզաբան-

2 Նոյն տեղում: Այս տեղանունների հարցում յատկապէս անընդունելի է Տամոնիտիսի կապակցութեամբ Ս. Տ. Երեմեանի կարծիքը: Նա համարում է, որ դա Թմանն է, ուր իջել է Նոյը, իսկ այնուհետեւ, մեզ անյայտ պատճառներով, առանց որեւէ հիմնաւորման, եզրակացնում է, որ նրա անունով Կորդուք գաւառը կոչուել է Թամոնիտիս (?): Ուսումնասիրողների մեծ մասը՝ Կիպերտ, Տոմաշեկ, Ե. Մարկուարտ, Յ. Մանանդեան, Գ. Խ. Սարգսեան, այն նոյնացնում են Տմորիքի հետ, ինչին մենք համաձայն ենք: Տե՛ս **Յ. Ժ. Յարութիւնեան**, *Ծոփքը եւ Ծոփքի թագաւորութիւնը ըստ Ստրաբոնի «Աշխարհագրութեան»*, ԲԵՀ, 1996, թիւ 1, էջ 69-70:

3 **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը եւ ներած. **Մ. Աբեղեանի** եւ **Ս. Յարութիւնեանի**, լրաց. **Ա. Բ. Սարգսեանի**, Երեւան, 1991, Ա, ժգ:

4 Այս ամէնի վերաբերեալ մանրամասն տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, Հայաստանը նախնադարեան-համայնական եւ ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. **Ս. Տ. Երեմեանի**, էջ 234-235, 480 (հեղ. Ս. Տ. Երեմեան, Գ. Ա. Տիրացեան)

5 **Քսենոփոն**, *Կիւրոպեդիա*, II, I, 6, III, I, 33, թարգ. հին յունարէնից Ս. Մ. Կրկեաշարեանի, Երեւան, 2000: 8.000 հեծելազօրի եւ 40.000 հետեւակի խնդրին անդրադարձել է նաեւ ակադ. Յ. Մանանդեանը, որը նրանց որակում է որպէս կադրային զինուորականներ, բայց մատնացոյց չի անում եւ շրջանցում է այդ զօրատեսակի

ման կապակցութեամբ առկայ է միայն մէկ, եւ երեւի անյաղթահարելի դժուարութիւն: Մենք ոչինչ չենք կարող ասել, թէ դրանց որ մասն էր տոկոսային առումով պրոֆեսիոնալ: Աւելի վաղ ժամանակների (Ք.ա. III-II հազարամեակների) կապակցութեամբ յայտնի է, որ հիմնականում պրոֆեսիոնալ էին համարւում միայն արքաների թիկնապահ ջոկատները:

Հին աշխարհում գոյութիւն ունեցած բանակներն առաւել ճիշտ կլինի բաժանել կադրային բանակի եւ աշխարհազօրի: Այդ սկզբունքով է առաջնորդուել նաեւ այս հարցի լաւագոյն գիտակներից մէկը՝ Հ. Դելբրիւկը[6], որը պրոֆեսիոնալ է համարում այն բանակները, որոնք համալրւում էին մշտական անձնակազմով եւ ունէին տարբեր զօրատեսակներ՝ հետեւակ, հեծելազօր, պաշարողական միջոցներ, համբարակային ծառայութիւններ եւ այլն... Կանոնաւոր բանակի ստեղծումը հնարաւորութիւն էր տալիս բնակչութեան մի որոշ մասին իր ողջ գործունէութիւնն անբաժանելիօրէն կապել ռազմական գործի հետ: Դրանով ստեղծւում էր մի հզօր բռունցք, որը պէտք է ապահովէր ինչպէս սահմանների, այնպէս էլ սեփական ժողովրդի անվտանգութիւնը, եւ միաժամանակ դառնալու էր հայ աւագանու ձեռքին գործիք նուաճումներ իրականացնելու ճանապարհին: Հայաստանում այդպիսի բանակի ստեղծումը պէտք է կապել Արտաշէսի անուան հետ: Այսպիսի ենթադրութեան առիթ կարող է լինել այն հանգամանքը, որ մենք ոչինչ չգիտենք, թէ ինչ սկզբունքներով է իրականացուել Արամի եւ Երուանդունիների զօրքերի համալրումը: Այժմ Արտաշէսի կողմից դրա ստեղծումը եւ լիովին անցումը ծառայութեան կադրային (պրոֆեսիոնալ) համակարգին ժամանակի հրամայականի արդիւնք էր, քանզի հելլենիստական պետութիւնների միջեւ մշտապէս տեղի էին ունենում պատերազմներ, իսկ Հայաստանը, որպէս այդ համակարգի անբաժան մաս, չէր կարող լինել դիտորդի դերում: Սակայն ռազմական արուեստի այնպիսի հեղինակութիւն, ինչպիսին Հ. Դելբրիւկն է, իր բազմահատոր ուսումնասիրութիւնում լիովին շրջանցում է Արտաշէսին եւ միայն համառօտակի, առանց մանրամասնութիւնների մէջ խորամուխ լինելու, յիշատակում է Տիգրան Բ-ի եւ Արտաւազդ Բ-ի օրօք տեղի ունեցած հայ-հռոմէա-պարթեւական ռազմական բախումների մասին:[7]

Այժմ փորձենք պահպանուած սակաւաթիւ ու կցկտուր տեղեկութիւնների հիման վրայ պարզել, թէ վերջապէս ինչպիսի բանակ է ստեղծել Արտաշէս Ա-ը: Հայոց արքան քաջ գիտակցում էր, որ մի բան է պետութեան հիմնումը, նրա տարածքների վերամիաւորումը, իսկ լիովին այլ երեւոյթ է նորաստեղծ պետութեան անվտանգութիւնն ապահովելը: Հռոմի եւ Սելեւկեանների միջեւ սկսուած եւ շարունակուող անզիջում պայքարը եւս, ստիպեց հայոց թագաւորին լուրջ ուշադրութիւն դարձնել հայկական բանակի հզօրացմանը, որը կը կարողանար եւ պէտք է ապահովէր Մեծ Հայքի թագաւորութեան անվտանգութիւնը:

Իր գահակալութեան առաջին օրերից Արտաշէս Ա-ը, պետութեան տարածքների վերամիաւորմանը զուգահեռ, կենսագործեց նաեւ վարչա-տարածքային բարեփոխումներ, որոնք նպատակ ունէին կարգաւորել պետական կառավարումը թէ՛ վերին, թէ՛ ստորին օղակներում, ինչպէս նաեւ կանոնաւորել զօրաշարժի կազմակերպ-

ստեղծման ուղին: Տե՛ս **Յ. Մանանդեան**, *Проблема общественного строя доаршакидской Армении*, Երկեր, հտ. Դ, Երեւան, 1981, էջ 466-467:

6 Տե՛ս **Г. Делбрюк**, *История военного исскуства в рамках политической истории*, т. I, Античний мир, СПб, ст. 52-61, 64, 301-311:

7 Տե՛ս նոյն տեղում, էջ 319-322, 324-325, 363:

© National Library of Armenia

ման գործը: Հայոց նորաթուխ արքան յատկապէս կարեւորում էր մասնաւոր-սեփականատիրական եւ համայնական կալուածքների սահմանազատումը: Մատենագիրները խօսում են Արտաշէսի այս կարգի երեք ռեֆորմների վերաբերեալ, որոնցից երկուսի մասին վկայում է Խորենացին, իսկ բաց թողնուած մէկի՝ երրորդի մասին, որքան էլ թուայ զարմանալի՝ հռոմէացի պատմիչ-աշխարհագրագէտ Պլինիոս Աւագը (23-79 թթ.):

Արտաշէսի կողմից համայնական եւ մասնաւոր-սեփականատիրական կալուածքների տարանջատման ու բաժանման վերաբերեալ Խորենացին վկայում է. «Յետ ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից եւ ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս, հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, եւ պնակաձեւ փոսել զմէջն, ծածկելով երկրի. եւ չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»:[8] Այս ռեֆորմով Արտաշէսը նպատակ ունէր շարքային համայնականների հողակտորները զերծ պահել մեծահարուստների ամէն տեսակի ոտնձգութիւններից: Քաջ յայտնի է իւրաքանչիւրին, որ այդ ժամանակներում հէնց համայնքն էր վճարում պետութեանը տրուող հարկերի «առիւծի բաժինը», ինչպէս նաեւ նրա անդամներով էր հիմնականում համալրւում բանակը: Փաստօրէն, ամրապնդելով համայնքը՝ Արտաշէսը զօրեղացնում էր բանակը եւ, կարծես թէ, առաջնորդւում էր հին հռոմէական յայտնի թեւաւոր արտայայտութեամբ. «Qui non alit arma sua, cogetur alere arma inimica – Ով չի կերակրում սեփական բանակը, ստիպուած կը լինի կերակրել թշնամու բանակը»:

Համայնքներում կատարուած բաժանումների վերաբերեալ առայժմ ամէն ինչ չէ, որ պարզ է: Այսպէս, անհնարին է պատասխանել, թէ ինչ սկզբունք է ընկած եղել այդ բաժանումների իրականացման հիմքում: Օրինակ՝ Պատմահայրը՝ Խորենացին, ոչինչ չի հաղորդում, թէ բաժանումների ժամանակ ինչն է հաշուի առնուել՝ համայնքի զբաղեցրած տարա՞ծքը, թէ՞ այնտեղ ապրող բնակչութեան քանակը եւ կամ ինչ-որ մի ուրիշ, մեզ առայժմ անյայտ հանգամանք: Հէնց այստեղ է, որ մեր մատենագրին իր մի արժէքաւոր վկայութեամբ պարզաբանելու եւ լրացնելու է գալիս հռոմէացի Պլինիոսը: Անշուշտ, չի բացառւում, որ Պատմահայրը ծանօթ է եղել Պլինիոսի «Բնական պատմութեանը», սակայն նրա «Հայոց պատմութիւնը» չունի եւ ոչ մի տեղեկութիւն այդ կապակցութեամբ, ուստի եւ անհնարին է վերջնականապէս պնդել կարծիքներից որեւէ մէկի օգտին: Պլինիոսը գրում է. «Ստոյգ է, որ նա (Մեծ Հայքը – Յ. Յ.) բաժանուած է ստրատեգիաներ կոչուած պրեֆեկտուրաների, որոնցից մի քանիսը թագաւորութիւններ պիտի կազմէին հնում: Նրանք թուով 120 են, եւ բարբարոսական անուններ ունեն»[9]: Նախ տեսնենք, թէ ինչ իմաստաւորում ունեն այս տերմինները: Praefectura կամ praefectus տերմինն ունի լատինական ծագում, բազմիմաստ բառ է, եւ, զինուորականից զատ, ունի նաեւ քաղաքացիական իմաստաւորում: Այն նշանակում է նաեւ վերակացու, բարքերի հսկիչ, կուսակալ կամ կողմնակալ... Այս

8 **Խորենացի**, Բ, ծզ: Պէտք է աւելացնել, որ պատմութիւնից ստոյգ յայտնի է, որ այդպիսի սահմանաքարերը Միջին Բաբելոնեան պետութիւնում կոչել են կուդուրրու, իսկ հին Հռոմում՝ տերմինուս:

9 **Plinii Secundi,** *Naturalis historiae,* (LCL), Cambridge, Mass.-London, 1950-1962, VI, 10, 27.

տերմինին համարժէք է համարեայ հին յունական strategia բառը, որը թարգմանւում է որպէս զօրավարութիւն:[10] Պլինիոսի վերոյիշեալ վկայութեան վերլուծութիւնն սկսենք վերջից: Ակադ. Ս. Տ. Երեմեանն իրաւացի է, երբ նշում է, որ, «բարբարոսական» ասելով, պատմիչը երեւի նկատի ունի այն հանգամանքը, որ մեր տեղանուններն իրենց հնչողականութեանբ էապէս տարբերւում էին յունա-հռոմէականից եւ դրանք անսովոր էին ինչպէս լսելիս, այնպէս էլ առաւել եւս արտասանութեան ժամանակ: Պատմաբանը նաեւ իրաւացի է, երբ գտնում է, որ այդ 120-ը կարող է վերաբերել մինչարշակունեաց Հայաստանին (գտնում են, որ Պլինիոսն իր աշխատութեան շարադրանքն աւարտել է Ք.յ. 77 թ.):[11] Եթէ անկողմնապահ դիտարկենք քաղաքական իրադարձութիւնների զարգացման ժամանակագրական յաջորդականութիւնը, ապա Արտաշիսեանների բարձումից մինչեւ Արշակունիների գահակալութեան սկիզբը այդպիսի վարչա-քաղաքական բաժանում անհնարին էր կատարել, իսկ աւելի ստոյգ ոչ մէկին անգամ պէտք չէր բարեփոխել երկրի ներքին կացութիւնը, քանզի երկրում իշխում էին օտարազգի դրածոյ թագաւորները: Սա պարզ եւ ակնյայտ է իւրաքանչիւրին, ով գոնէ ամենահամառօտ ձեւով ծանօթ է այդ ժամանակ Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնների զարգացման ընթացակարգին Արտաշիսեանների անկումից մինչեւ Արշակունիների պատմական թատերաբեմ իջնելը:

Ուրեմն մնում են Արտաշիսեանները, իսկ նրանց արքայացանկում իր բարենորոգչական գործունէութեամբ առանձնանում է առաջին հերթին հէնց Արտաշէսը: Այսպիսով, որպէս առաջին հաւանական թեկնածու՝ մնում է Արտաշէսը: Տիգրան Մեծի կապակցութեամբ պէտք է նշել, որ նա իր գահակալութեան տարիների մեծ մասն անցկացրեց աշխարհակալ կայսրութեան կազմակերպման խնդիրների իրականացմամբ, եւ, ինչպէս ցոյց է տալիս պատմութեան զարգացման բնականոն ընթացքը, Հայաստանի վարչա-քաղաքական բաժանման համակարգը նրան լիովին բաւարարում էր:

Ինչ վերաբերում է նրա որդուն՝ Արտաւազդ Բ-ին, ապա վերջինս, իր կամքից անկախ, հարկադրուած էր պատերազմել Հռոմի կողմից Արտաշիսեան Հայաստանի դէմ սանձազերծուած պատերազմում, ուստի ժամանակ էլ չունէր մտածելու վարչա-տարածքային փոփոխութիւններ կատարելու մասին: Այսպիսով, մեզ թւում է, որ վարչական բարենորոգումների առաւել հաւանական թեկնածուն մնում է միայն Արտաշէսը:

Այժմ մեզ անհրաժեշտ է պարզաբանել, թէ ինչ հիմքեր կարող է ունենալ Պլինիոսի յիշատակած 120 պրեֆեկտուրաների կամ ստրատեգիաների մասին վկայութիւնը: Առաջին հայեացքից կարող է թուալ, որ հռոմէացի մատենագրի մօտ առկայ է ինչ-որ թիւրիմացութիւն, քանզի «Աշխարհացոյց»-ից ստոյգ յայտնի է, որ պատմական Մեծ Հայքն ունեցել է մօտաւորապէս 190 գաւառներ (մի փոքր աւելի կամ պակաս՝ ըստ տարբեր ձեռագրերի): Կարելի է ենթադրել նաեւ, որ նրա մօտ առկայ է ակնյայտ չփոթմունք, եւ որ պէտք է լինէր 12, 10 կամ էլ 20, այսինքն՝ թուերից մէկն աւելի ուշ թիւրիմացաբար է աւելացուել ձեռագիրն արտագրողների կողմից: Այս դէպքում պէտք է եզրակացնել, որ մատենագիրը նկատի է ունեցել Մեծ Հայքի աշխարհները կամ նահանգները: Բայց սա եւս անհնարին է, քանզի մեզ յայտնի 15

10 Տե՛ս **И. Х. Дворецкий,** *Древнегреческо-русский словарь,* т. II, Москва, 1958, ст. 1511; նաեւ նոյնի՝ *Латинско-русский словарь,* Москва, 1976, ст. 794:

11 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն,* հտ. I, էջ 839-840 (հեղ. Ս. Տ. Երեմեան):

© National Library of Armenia

նահանգները աւելի ուշ շրջանի արտայայտութիւն են: Ստացւում է, որ պլինիոսեան 120-ի եւ «Աշխարհացոյց»-եան 190-ի միջեւ կայ ինչ-որ մի անյայտ կապ, որը, սակայն, անհրաժեշտ է ապացուցել: Վերոյիշեալ քննարկումից, փաստօրէն, մենք կարողացանք նախ եւ առաջ պարզաբանել, որ հռոմէացի մատենագիրը խօսում է կամ նկատի ունի Մեծ Հայքի գաւառային բաժանումները՝ որպէս վարչա-տարածքային բաժանումների հիմնական միաւորներ:

Քաջ յայտնի է, որ Պլինիոսի «Պատմութիւնը» ստրկատիրութեան ծաղկման եւ բարգաւաճման ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբիւր է, իսկ «Աշխարհացոյց»-ը՝ վաղ ֆէոդալիզմին կամ աւատատիրութեանը (վերջինս, ինչպէս այժմ ապացուցուած է, գրուել է Ե դարում)[12]: Արշակունեաց Հայաստանում, ինչպէս ժամանակի միւս երկրներում, ֆէոդալիզմի սաղմերը ձեւաւորուեցին Գ դարում, հիմնական անցումը կատարուեց Դ, իսկ վերջնականապէս այն հաստատուեց Ե դարի սկզբներին: Այժմ մեզ անհրաժեշտ է համադրել այս երկու հասարակարգերը խնդրի վարչա-քաղաքական քննութեան տեսանկիւնից: Ստրկատիրական դարաշրջանի պետութիւնը կենտրոնացուած, վարչա-տարածքային առումով սահմանափակ մասերի բաժանուած կառոյց էր, որի դասական օրինակ կարող է հանդիսանալ հին արեւելեան թագաւորութիւններից ցանկացածը: Ողջ հին աշխարհի կապակցութեամբ միակ բացառութիւնը, որ կարելի է անել այս կապակցութեամբ, հին Յունաստանն է, ուր իւրաքանչիւր քաղաք նաեւ պետութիւն էր: Նոյնպիսի կառոյց ունէր նաեւ ստրկատիրական դարաշրջանի հասարակութիւնը, որտեղ թագաւորից ներքեւ գտնւում էին ազնուականները (աշխարհիկ եւ հոգեւոր), ազատները եւ ստրուկները: Ֆէոդալական հասարակարգն ունի խայտաբղէտ, այսինքն՝ բազմախաւ եւ բազմատարր կառուցուածք:[13] Այս ամէնի մասին է խօսում թէկուզեւ այն փաստը, որ աշխարհաժողովների ժամանակ Արշակ Բ-ի կողքին էին նստում, ինչպէս վկայում է Փաւստոսը, մօտ 900 տարբեր իրաւասութիւններ ունեցող գործակալներ (չհաշուած միւս մեծամեծերն ու տանուտէրերը): Պատմիչը վկայում է. «Եւ այլ յայսմ ազգաց եւ ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թո՛ղ զնահապետս մեծամեծս եւ զտանուտեարս, որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թո՛ղ զոտնկայս գործակալութեանն սպասու»[14]: Ն. Ադոնցը, բազմակողմանի վերլուծութեան ենթարկելով այս վկայութիւնը, ինչպէս նաեւ «Վարք Ներսէսի» սկզբնաղբիւրը, ուր 900-ը փոխարինուած է 400-ով, գտնում է, որ այս երկուսում էլ առկայ է ակնյայտ թիւրիմացութիւն, եւ, ի վերջոյ եզրակացնում է. «Այդ թուերը չեն արդարացւում Հայաստանի նախարարութիւնների քանակին վերաբերող նաեւ այլ տուեալներով»[15]:

Ինչպիսի թիւ էլ լինի, այնուհանդերձ սրանցից իւրաքանչիւրն ունէր մի նպատակ՝ դառնալ աշխարհատէր նախարար կամ իշխան: Հէնց այս պատճառով էլ նրանք կանգ չէին առնում ոչնչի առաջ եւ պատրաստ էին յաղթահարելու ցանկացած անանցանելի խոչընդոտը: Փաւստոսի «Հայոց պատմութիւնը» հեղեղուած է ներֆէոդալական այդպիսի մրցակցութիւնների նկարագրութեամբ, որտեղ իշխաններից եւ ոչ մէկը տարբերութիւն չէր դնում պայքարի ձեւերի միջեւ: Այս պատճառով էլ լինում էին նոյնիսկ դաւաճանութեան դէպքեր: Ինչ վերաբերում է Արշակունիներին, ապա նրանք, բնականաբար ոչ թէ դիտորդի դերում էին, այլ նոյնպէս օգտագործում էին բոլոր հնարաւոր մեթոդները պետութեան միասնականութիւնն ու հզօրութիւնը պահպանելու համար: Պլինիոսի 120-ի եւ «Աշխարհացոյց»-ի 190-ի համադրութիւնը ապացուցում է, որ այնպիսի լիազօրութիւններ, ինչպիսին որ ի սկզբանէ անտի ունէին վերոյիշեալ 120-ը, ժամանակի ընթացքում ֆէոդալիզմի արմատաւորմամբ ստացել են եւս 70-ը՝ դառնալով, ինչպէս անուանում է նրանց Փաւստոսը, մեծամեծեր: Փաստօրէն, միւս բոլոր ցանկացողները գտնուելու էին «խաղից դուրս» կարգավիճակում: Սա ֆէոդալիզմի էութիւնն էր, երբ բոլոր երկրներում, այդ թւում նաեւ Հայաստանում իրականացաւ նախկին մեծածաւալ իշխանութիւնների տարանջատում՝ հողերի պարցելացում: Հայաստանը եւս առաջիններից մէկը ենթարկուեց զարգացման այդ բնականոն ընթացքին:

Սոյն շարադրանքի սահմաններում մենք նպատակ չենք հետապնդում պարզաբանելու, թէ որոնք են այդ 70 իշխանութիւնները, որ առաջ են եկել աւատատիրական յարաբերութիւնների ձեւաւորման արդիւնքում: Միայն պէտք է արձանագրել, որ Մեծ Հայքի վարչա-տարածքային միաւորների անուանական թուարկման ասպարէզում յունա-հռոմէական երեք նշանաւոր պատմիչ-աշխարհագրագէտներից՝ Ստրաբոն, Պտղոմէոս եւ Պլինիոս, ամենաժուժկալը հէնց վերջինս է: Պլինիոսը խօսում է միայն Սոֆէնէի՝ որպէս երկրի, եւ Ակիլիսէնէի, Կարենիտիսի, Դերզէնէի մասին՝ որպէս պրեֆեկտուրաների[16]: Ինչ վերաբերում է միւս երկու հեղինակներին, ապա Ստրաբոնի մօտ դրանց քանակն անցնում է երկու տասնեակից, իսկ Պտղոմէոսի մօտ ճիշտ երկու տասնեակ է: Այստեղ ուշագրաւն այլ հանգամանք է. բոլոր երեք մատենագիրներն էլ տարբերութիւն չեն դնում նահանգի եւ գաւառի միջեւ: Սա միանշանակ մատնացոյց է անում, որ նահանգ-գաւառ բաժանումն առաջ է եկել աւելի ուշ՝ ֆէոդալիզմի արմատաւորման հետ միասին, երբ այն գտնւում էր սաղմնային վիճակում: Բնականաբար եղել են նաեւ չորս բդեշխութիւնները: Ստրկատիրութեան դարաշրջանում գիւղական համայնքներից վերեւ եղել են 120 ստրատեգիաները, իսկ երկրի չորս սահմանների անվտանգութիւնն ապահովել են բդեշխութիւնների նախատիպ հանդիսացող չորս սահմանապահ իշխանները:

Որպէսզի պարզ լինի, թէ ինչպէս է կատարուել պլինիոսեան ստրատեգիաների տրոհումն ու մասնատումն աւելի փոքր վարչա-տարածքային միաւորների, քննութեան ենթարկենք Մեծ Հայքի «Աշխարհացոյց»-եան 15 նահանգներից ցանկացած երկուսը, օրինակ՝ Գուգարքը եւ ապա՝ Վասպուրականը: Համաձայն «Աշխարհա-

12 Այս հարցի բազմակողմանի քննութիւնը տե՛ս Բ. Յ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (արեւմտեան եւ հարաւային աշխարհներ)*, Եր., 2001, էջ 5-42:

13 Հին հայկական ֆէոդալական հասարակարգի ուսումնասիրութեամբ զբաղուել են բազմաթիւ նշանաւոր ուսումնասիրողներ: Այս կապակցութեամբ տե՛ս **Յ. Մանանդեան**, *Ֆէոդալիզմը հին Հայաստանում*,- Երկեր, հտ. Դ, էջ 187-436. **Ն. Ադոնց**, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*. Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի, Երեւան, 1987, էջ 266-330 («Նախարարութեան քանակական վերլուծութիւնը», «Նախարարութիւնների տերիտորիալ վերլուծութիւնը» գլուխները). **И. Джавахов**, *Государственний строй древней Грузии и древней Армении*, СПб, 1905, ст. 100-110, 126, 132-134; **А. П. Новосельцев**, *Генезис феодализма в странах Закавказья, (опыт сравнительно-исторического исследования)*, Москва, 1980, ст. 75-81, 105-112; **Ս. Մ. Կրկեաշարեան**, *Հին Հայաստանի պետական կառուցուածքը (Ք.ա. Զ - Ք.յ. Դ դդ.)*, Եր., 2005, էջ 296-298:

14 *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, Դ, բ

15 Տե՛ս **Ն. Ադոնց**, նշ. աշխ, էջ 271:

16 **Plinii Secundi**, V, 13,66, 20,83

© National Library of Armenia

ցոյց»-ի՝ Գուգարք նահանգն ունեցել է 9 գաւառներ՝ Ջորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Ջաւախք, Արտահան, Կղարջք: Երբ ուշադիր զննում ենք նրա վարչա-քաղաքական բաժանումների քարտէզը, ապա աչքի է զարնում այն հանգամանքը, որ գաւառներից շատերը՝ նոյնիսկ կէսից աւելին, ունեն չափազանց սահմանափակ տարածք, որոնք, մեր կարծիքով, կարելի է անուանել գաճաճ կամ թզուկ գաւառներ: Հետագայում՝ աւատատիրական բաժանումների ընթացքում, տեղի է ունեցել տարածքների մասնատում եւ անհամեմատ աւելացել է Գուգարքում գտնուող վարչա-տարածքային բաժանումների թուաքանակը: Բ. Յ. Յարութիւնեանի կարծիքով, մինչեւ Ք.յ. Բ դարը Գուգարքն ունեցել է ընդամէնը երկու պլինիոսեան ստրատեգիա՝ Կաղարջքը եւ բուն Գուգարքը: Ընդ որում, վերջինիս կազմում են եղել վերոյիշեալ ինը գաւառներից եօթը (բացի Կղարջքից եւ Արտահանից): Մասնատման արդիւնքում միայն Կղարջքի տարածքում առաջացել են Շաւշեթ, Նիգալ, Մռուղ, Մրիտ գաւառները: Նոյն պատճառներով էլ Գուգարքի արեւելքում առաջ են եկել Քուիշափոր, Բողնոփոր եւ Մանգլեաց Փոր գաւառները: Փաստօրէն, գաւառների քանակը դարձել է 16-ը: Սա ընդունում է Ս. Տ. Երեմեանը՝ բայց յօրինելով նաեւ «հիմնում» է Պարուար եւ Խանցիխէ գաւառները, որն ընդհանրապէս չի համապատասխանում իրականութեանը եւ չկայ ոչ մի աղերս նրանց միջեւ[17]: Այժմ անդրադառնանք Վասպուրականին, որը Մեծ Հայքի միւս աշխարհներից առանձնանում է իր գաւառների մեծաքանակութեամբ, թուով՝ 35-ը: Եթէ Վասպուրականի տարածքը՝ 40.870 կմ², բաժանենք գաւառների թուաքանակի վրայ, ապա միջին հաշուով կը ստացուի 1.167 կմ², որքան պէտք է լինէր գաւառներից իւրաքանչիւրի տարածքը (մի փոքր աւելի կամ պակաս): Սակայն այստեղի որոշ գաւառներ զբաղեցրել են այնքան տարածք, որքան հին յունական պոլիս-պետութիւններինն էր: Յունական պոլիսներից Արգոսն ունէր 1.400 կմ² տարածք, Փոկիսի 22 պոլիսներն՝ 1.650, իւրաքանչիւրը միջին հաշուով՝ 70-75 կմ², Ատտիկան՝ 2.250: Ամենամեծը եղել է Սպարտան՝ 8.400 կմ² տարածքով:[18] Այժմ վերադառնանք Վասպուրականին: Այստեղի Գուկանք գաւառն ունեցել է 225 կմ² տարածք, Արտաշիսեանը՝ 150, Պալունիքը՝ 200, Մեծնունիքը՝ 475, Կրճունիքը՝ 800, Աղանդ-Ռոտը՝ 850, Վարաժնունիքը՝ 150, Գազրիկանը՝ 600 (?), Տայգրեանը՝ 375, Բոգունիքը՝ 275, Տոսպը՝ 475, Կուղանովիտը՝ 370, Բուժունիքը՝ 400: Սա Ս. Տ. Երեմեանի կարծիքն է եւ այս ցուցակից մենք առայժ դուրս ենք թողնում Պարսպատունիքը, քանզի Ս. Տ. Երեմեանը նրան «յատկացնում» է 5.550 կմ² տարածք:[19] Խնդիրը իր իրաւացի պարզաբանումն է ստացել Բ. Յ. Յարութիւնեանի մօտ: Վերջինս նշում է. «Ամբողջութեամբ համաձայնելով հեղինակի հետ (խօսքը Ս. Տ. Երեմեանի մասին է – Յ. Յ.) Բասորոպեդայի՝ Վասպուրականի հետ նոյնացման հարցում՝ մենք չենք կիսում Ս. Տ. Երեմեանի տեսակէտը Բասորոպեդան Պարսպատունիքին համարժէք յայտարարելու եւ վերջինս էլ Ղարադաղում տեղադրելու խնդրում: Ընդամէնը 50 զինուոր մարտադաշտ դուրս բերող Պարսպատունիքի իշխանը, չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի, եւ որ կարեւորն

17 Տե՛ս Բ. Յ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի*,- ԲԵՀ, 1977 թիւ 2, էջ 194-195. նաեւ նոյնի՝ Հայաստանի պատմութեան ատլաս, մաս Ա, Երեւան, 2004, էջ 42-43:

18 Տե՛ս *Հին Յունաստանի պատմութիւն*, խմբ. Վ. Ի. Աւդիեւի եւ ուրիշն., Եր., 1982, էջ 144:

19 Տե՛ս Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ՝ VII դ. հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ)*, Եր., 1963, էջ 117:

է, ինչպէս ցոյց կը տայ հետագայ քննութիւնը, Պարսպատունիքը չէր կարող երբեք գտնուել Կարմիր կամ Կոտոր գետից արեւելք ընկած շրջանում»[20]: Այս ցուցակից Բ. Յ. Յարութիւնեանը հարցականի տակ է դնում Գազրիկանի լինելիութեան խնդիրը, եւ ստացւում է 13 թիւը: Փաստօրէն, ամենաքիչը՝ գոնէ 13 գաւառներ առաջացել են ֆէոդալիզմի ներթափանցման պայմաններում, ուստի պլինիոսեան պրեֆեկտուրաների դարաշրջանում, այստեղ ամենաշատը կարող էր լինել 22 վարչա-տարածքային միաւոր: Ահա թէ ինչ ճանապարհով կարող էր 120-ը վերածւուել 190-ի: Այսպիսի բաժանումների ճանապարհով իրենց ժամանակին անցել են պետութիւնների մեծ մասը, որն, օրինակ, ռուսաստանեան պատմութեան մէջ յայտնի է ուդելային (նշանակում է աւատակալուածք, իշխանական կալուածք, բաժնեկալուածք, ստացուածք, հասաբաժին) իշխանութիւն անուամբ[21]: Հետագայում դա իր դասական արտայայտութիւնն ստացաւ միջնադարեան Գերմանիայում:

Այս բաւականին մանրակրկիտ վերլուծութիւնը տեղիք է տալիս մէկ այլ բնականոն հարցի եւս. ի՞նչ տուեցին այս բարեփոխումներն Արտաշէսին: Փաստօրէն Արտաշէսի պարագայում բանակը դառնում էր հզօր ուժ, որը պէտք է հակազդէր հակառակորդի ցանկացած ոտնձգութիւն, ապահովէր երկրի պետական սահմանների անվտանգութիւնը, եւ երկրորդ՝ պետութիւնն այսուհետեւ ստանում էր կառավարման աւելի կենտրոնածիգ կերպարանք, եւ ինչպէս մայրաքաղաքում, այնպէս էլ հեռաւոր ծայրամասերում կառավարման ասպարէզում կատարւում էր միօրինականացում: Սա վերաբերում էր ինչպէս զինակոչի խնդրին, այնպէս էլ երկրի համար կենսական նշանակութիւն ունեցող միւս հիմնախնդիրներին, ինչպէս, օրինակ, հարկահանութեանը: Արտաշէսն իր ռազմական եւ վարչական բարեփոխումների իրականացումն սկսել է, ինչպէս տեղեկացնում է Խորենացին, համապետական նշանակութիւն ունեցող բաժանումներից. «Բաժանէ Արտաշէս զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարեւելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, եւ զարեւմտեանն տայ Տիրանայ, զհարաւանինն ի Սմբատ հաւատայ եւ զհիւսիսայինն ի Զարեհ»[22]:

Հին հայկական պրոֆեսիոնալ բանակի ներսում տիրող իրավիճակի բոլոր մանրամասնութիւններն անհնար է բացայայտել: Դրանից խուսափել է նաեւ այս հարցի, մեր կարծիքով, լաւագոյն գիտակ գնդապետ Ս. Վ. Սարգսեանը, որը հեղինակ է տուեալ խնդրին վերաբերող մի ուշագրաւ աշխատութեան:[23] Նա հպանցիկ կանգ է առել արտաշիսեան դարաշրջանի վրայ, սակայն խնդիրը լուսաբանել է միայն ռազմարուեստի տեսանկիւնից,[24] իսկ թէ ի՞նչ ճանապարհով էր ստեղծուել այդ զօրքը, ինչպիսի՞ ներքին ստորաբաժանումներից էր բաղկացած՝ հեղինակը աչքաթող է արել: Այս հարցերն առաջին անգամ միայն հպանցիկ պարզաբանում են ստացել ակադ. Գ. Խ. Սարգսեանի կողմից:[25] Խորենացու վերոյիշեալ վկայութիւնից, առաջին հերթին, պէտք է եզրակացնել, որ Արտաւազդը հանդիսացել է զօրահրամանատարը՝ փաստօրէն զբաղեց-

20 Բ. Յ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական...*, էջ 370-371

21 Ռուսաստանի ֆէոդալիզմի դարաշրջանի մասնատուածութեան կապակցութեամբ տե՛ս Н. П. Павлов-Сильванский, *Феодализм в России*, Москва, 1988, ст. 39-152:

22 Խորենացի, Բ, ծգ

23 Ս. Վ. Սարգսեան, *Հայ ռազմական արուեստի պատմութիւնից*, Եր., 1969, էջ 54-60

24 Տե՛ս նոյն տեղում, էջ 54-60:

25 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 686-688 (հեղ. Գ. Խ. Սարգսեան):

© National Library of Armenia

նելով սպարապետի պաշտօնը: Երկրորդ՝ Արտաշէսը հայոց արքաներից երեւի առաջինն էր, որ երկիրը բաժանեց նաեւ չորս սահմանային կողմերի՝ փաստօրէն դնելով նաեւ այն անկիւնաքարի հիմքը, որի վրայ ապագայում հիմնուեցին չորս բդեշխութիւնները:[26] Թէ ինչպիսի տեսք ունէր հայոց զօրքը կոնկրետ Արտաշէսի օրօք, անտիկ՝ յունա-հռոմէական մատենագիրները (Պոլիբիոս, Ստրաբոն, Դիոդորոս Սիկիլիացի, Պլուտարքոս, Ապիանոս, Յովսէպոս Փլաւիոս, Հիերոնիմոս) լռում են: Նրանք խօսում են հիմնականում արտաքին քաղաքականութեան վերաբերեալ: Այսուհանդերձ առանձին սուղ եւ կցկտուր վկայութիւններ պահպանուել են միայն Խորենացու մօտ: Իր աշխատութեան տարբեր մասերում, հանգամանքների բերումով, մեր Պատմահայրը խօսում է մասնաւորապէս՝ Արտաշէսի օրօք հայկական զօրքի առանձին ստորաբաժանումների՝ բանակի, գնդի եւ վաշտի վերաբերեալ: Նրա մօտ վկայութիւններ կան նաեւ տարբեր զօրատեսակների մասին՝ հեծելազօրի, ծանր եւ թեթեւ հետեւակի, նիզակակիրների, նետաձիգների, սրակիրների, պարսատիկաւորների՝ եւ այլոց մասին: Հաշուի առնելով օտար բանակների կազմակերպումը՝ դժուար չէ տեսնել, որ հայկական զօրքում եւս մեծամասնութիւն են կազմել հետեւակայինները: Այս ամէնից զատ, զօրքն օգտագործել է պաշարողական տեխնիկայ, որն այն ժամանակ մեծ տարածում ունէր ողջ քաղաքակիրթ օյկումենէում՝ հելլենիստական պետութիւնների համակարգում, որի անբաժան մասն էր նաեւ Արտաշիսեան Հայաստանը:

Բանակն ունէր նաեւ սակրաւորների զօրատեսակը[27], որի հիմնադիրը համաշխարհային ռազմարուեստի պատմութեան մէջ եղել է Թիգլատպալասար Գ-ը: Չի բացառւում նաեւ հետախոյզ ծառայութեան գոյութիւնը՝ a priori յենուելով որոշ ենթադրութիւնների վրայ: Այս երեւոյթը նախ եւ առաջ մեծ տարածում էր գտել ողջ հելլենիստական աշխարհում, եւ Հայաստանն իր անվտանգութիւնն ապահովելու համար հազիւ թէ չհետեւէր միւսներին: Ժամանակին, մի քանի դար առաջ դեռ Վանի թագաւորները, յատկապէս՝ Սարդուրի Բ-ը եւ Ռուսա Ա-ը ունեցել են լաւ կազմակերպուած հետախուզութիւն եւ հակահետախուզութիւն, որպէսզի կարողանային վնասազերծել ասորեստանեան արքաների (Թիգլատպալասար Գ-ի եւ յատկապէս՝ Սարգոն Բ-ի) հետախոյզներին, որոնք լայն քայքայիչ գործունէութիւն էին ծաւալում այստեղ:[28] Արտաշէսի օրօք Մեծ Հայքում հետախուզական ծառայութեան կատարելագործման վերաբերեալ կարող է խօսել նաեւ այն փաստը, որ որոշ ժամանակ նրա արքունիքում է եղել Կարթագենի նշանաւոր զօրավար Հաննիբալը, որը համաշխարհային ռազմարուեստի պատմութեան մէջ յայտնի է նաեւ՝ որպէս առաջին անուանի հետախոյզը:[29]

Հայաստանում գոյութիւն ունեցող հակահետախուզութեան մասին, որը պէտք է ապահովէր մեր պետութեան անվտանգութիւնը, վկայում են Պլուտարքոսը եւ Ապիանոսը, երբ Տիգրան Մեծի դէմ պատերազմ էր սանձազերծել Հռոմէական հանրապետութիւնը: Խօսքը վերաբերում է ինչպէս 71 թ. հռոմէացի դիւանագէտ Ապպիոս Կլաւդիոսի Հայաստան այցելելուն,

26 Զորս բդեշխութիւնների ստեղծման խնդիրը վերջերս հիմնարար քննարկուել է Բ. Ց. Ցարութիւնեանի կողմից (Բ. Ցարութիւնեան, *Մեծ Հայքի բդեշխութիւնների եւ բդեշխութեան հաստատութեան շուրջ*,- «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 97-178):

27 Տե՛ս **Խորենացի**, Բ, խզ-կ:

28 Տե՛ս **Б. Б. Пиотровский**, *Ванское царство*, Москва, 1959, ст. 95-110:

29 Տե՛ս **И. А. Дамаскин**, *Сто великих разведчиков*, Москва, 2001, ст. 7-9:

այնպէս էլ յատկապէս՝ Ծոփքում հռոմէացիների ծաւալած քարոզչութեանը, որը արդէն, Ք.ա. 94 թ. սկսած, այլեւս անկախ պետութիւն չէր եւ, որպէս սովորական նահանգ, միացուել էր Մեծ Հայքին:[30] Հետախուզական եւ լրտեսական կատարեալ համակարգ ստեղծել էր Տիգրանի աները՝ Պոնտոսի արքայ Միհրդատ Զ Եւպատորը (Ք.ա. 111-63 թթ.), որը նաեւ մեր արքայի ռազմական դաշնակիցն էր[31]: Եւ վերջապէս, Արտաշէսի օրօք Խորենացին երկիցս յիշատակում է նաեւ չեփորահարների մասին, որոնք այն ժամանակի զինուորական նուագախումբն էին կազմում[32] եւ միաժամանակ կատարում կապաւորի դեր՝ զօրապետի հրամանները ձայնային ազդանշանների միջոցով հաղորդելով միւսներին: Մեր կարծիքով, այս բոլոր զօրատեսակները հակահետախուզութեան հետ միասին պետութեան անդորրն ու անվտանգութիւնն էին ապահովում:

Արտաշէսի պետութեան զինուած ուժերի հետ առնչուող խնդիրներից է նաեւ բանակի թուաքանակի բացայայտումը: Ուսումնասիրողներն այժմ միաբերան ընդունում են, որ նա ունեցել է 100 հազարանոց զօրք, այսինքն՝ նրա թիւը կրկնապատկուել է, եթէ այն համեմատում ենք Երուանդական Հայաստանի բանակի հետ:[33] Այս հաշուարկը կատարուած է՝ այն համապատասխանեցնելով երկրի բնակչութեան թուաքանակին, ինչպէս նաեւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արտաշէսը, վերամիաւորելով Մեծ Հայքի 15 նահանգներից 14-ի տարածքը, մօտաւորապէս կրկնապատկեց իր պետութեան տարածքները վերջին Երուանդեանների համեմատ: Վերջապէս, հաշուարկի իրականացմանը մեծապէս օգնում է պայմանականօրէն «Զօրանամակ» կոչուած փաստաթուղթը, որը, վերաբերելով անշուշտ աւելի ուշ ժամանակաշրջանի, այդուհանդերձ ունի յոյժ կարեւոր աղբիւրագիտական նշանակութիւն քննարկուող հարցի համար:[34] Միաժամանակ յայտնի է նաեւ, որ Տիգրան II-ի օրօք բանակի թիւը եռապատկուել է, քանզի նոյնքան անգամ աւելացել էր պետութեան տարածքը:

Արտաշէսի ստեղծած բանակի մասին խօսելիս, չպէտք է զանց առնել եւ մոռանալ մէկ կարեւոր հանգամանքի մասին եւս: Արտաշէսն, ինչպէս մի քանի անգամ արդէն նշուեց վերեւում, իր գործունէութիւնն սկսել էր՝ որպէս Սելեւկեան զօրավար: Իսկ Սելեւկեանների, ինչպէս եւ միւս հելլենիստական երկրների բանակներում, չափազանց կարեւոր տեղ եւ նշանակութիւն ունէր զինուորական համայնքների կամ, այսպէս կոչուած, կատոյկոսների կազմակերպումը: Մենք չենք կարող ամբողջովին ժխտել կամ էլ հիմնաւորապէս պնդել, որ այսպիսի համայնքներ չեն եղել նաեւ Հայաստանում: Դժբախտութիւնն այն է, որ մատենագիրներն այս կապակցութեամբ ոչ միայն ոչինչ չեն վկայում, այլ նոյնիսկ չեն ակնարկում, ուստի եւ չկայ ոչ մի կռուան մեր վերոյիշեալ ենթադրութիւնը հաստատապէս պնդելու համար:

30 Plutarchi Vitae parallelae, Lipsiae, 1884, Lucul, 21, 24, 25, Appian Roman History, (LCL), Cambridge Mass.-London, 1982, Mithr. 84

31 Այս կապակցութեամբ մանրամասն տե՛ս **П. В. Остапенко**, *Тайная война в древнем мире*, Минск, 2004, ст. 295-313 ("Жестокий полиглот" գլուխը): Հեղինակն այստեղ մեծ ուշադրութիւն է յատկացնում նաեւ Տիգրանի ունեցած դերին հետախուզութեան եւ հակահետախուզութեան ասպարէզներում:

32 **Խորենացի**, Բ, խզ, կ

33 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 686:

34 «Զօրանամակի», ինչպէս եւ միւս կարեւոր փաստաթղթի՝ «Գահնամակի» քննութիւնը մանրամասն կատարուել է Ն. Ադոնցի կողմից, որն այդ խնդրին է նուիրել իր աշխատութեան գլուխներից մէկը: Տե՛ս **Ն. Ադոնց**, նշ. աշխ, էջ 282-283, 294-295:

© National Library of Armenia

Հայոց թագաւորն, անտարակոյս, ունեցել է նաեւ ինտենդանտական (համբարակային) ծառայութիւն, որը պարտաւոր էր զօրքին մշտապէս ապահովել հանդերձանքով, զէնք ու զրահով եւ սննդով: Սակայն, ցաւօք, այդ մասին պատմիչները տեղեկութիւններ չեն պահպանել:

Արտաշէսի նորաստեղծ բանակի հզօրութեան մասին են խօսում նաեւ պատերազմի դաշտում նրա ձեռք բերած յաջողութիւնները: Վերամիաւորել Մեծ Հայքի գրեթէ ողջ տարածքը եւ այս ընթացքում չհանդիպել արտաքին եւ ոչ մի ուժի հակազդեցութեան՝ ուղղակիօրէն անհնարին էր: Եթէ արեւելքում, ըստ էութեան, չկար մի ուժ, որը կը հակառակուէր նրա վերամիաւորման քաղաքականութեանը, ապա նոյնը չի կարելի ասել միւս երեք ուղղութիւնների կապակցութեամբ: Վրաց ժամանակագրութիւնից, որը յայտնի է «Քարթլիս Ցխովրեբա» անուամբ, մենք տեղեկանում ենք, որ հիւսիսային հողերի վերամիաւորումը յանգեցրել է հայ-վրացական պատերազմի, որի ընթացքում վերջիններիս ռազմական աջակցութիւն են ցուցաբերել նաեւ ալանները: Հետագայ շարադրանքում պատմիչը՝ Լէոնտի Մրովելին (Լէոնտիոս Ռուիսեցին), գրում է. «Ապա վրացիներն ու օսերը, նեղ տեղն ընկնելով, խնդրեցին հաշտութիւն՝ արիւն եւ հատուցումն չփնտրելով: Հայոց թագաւորն ունկնդիր եղաւ նրանց աղերսին, եւ դրուեց ուխտ եւ երդումն. եւ հայոց թագաւորը, ստրկացնելով վրացիներին եւ օսերին, գնաց»[35]:

Նոյն մատենագրի վկայութեամբ, աւելի ուշ տեղի է ունեցել երկրորդ ընդհարումը կամ պատերազմը, որի աւարտից յետոյ կրկին ստորագրուել է հաշտութիւն՝ հետեւեալ պայմաններով. «Եթէ երեւան գայ որեւէ թշնամի եւ պատերազմի ձեզ հետ (այսինքն՝ հայերի – Յ. Յ.)՝ մենք երկոքեան թագաւորներս անձամբ եւ մեր զօրքով ձեզ հետ կը լինենք եւ կ'օգնենք, իսկ եթէ որեւէ մէկի դէմ պատերազմէք՝ մենք տասը հազար սպառազէններով կ'օգնենք ձեզ: Եւ վրացական այս քաղաքում կը կտրենք դրամ Արտաշէս թագաւորի պատկերով: Այս պատճառով հայերը վերադարձրին Վրաց (Քարթլիի) սահմանները՝ Ծունդա քաղաքը եւ Դեմոթի բերդը, Ջաւախքն ու Արդահանը: Եւ այսուհետեւ համերաշխ էին հայերը եւ վրացիները եւ օսերը, եւ երեք (ժողովուրդն) էլ միասին կուում էին թշնամու դէմ»[36]: Հարկ է նշել, որ այստեղ ակնյայտօրէն աչքի է զարնում մի թիւրիմացութիւն կամ անճշտութիւն: Պատմիչը, խոստովանելով հանդերձ, որ յաղթել է Արտաշէսը, եւ ստորագրուել է վրացիների համար չափազանց ծանր պայմաններով հաշտութիւն, այսուհանդերձ խօսում է տարածքների որոշ մասի վերադարձնելու մասին, որն անհասկանալի եւ անիմաստ է:

Նոյնպիսի փառաւոր եւ պանծալի աւարտ ունեցան նաեւ Արտաշէսի՝ հարաւում վարած պատերազմական գործողութիւնները: Տամորիտիս-Տմորիքի վերամիաւորումը, որը տեղի է ունեցել Սելեւկեան Անտիոքոս Դ Եպիփանէս թագաւորի օրօք, ինչպէս եւ պէտք էր սպասել, յանգեցրել է հայ-սելեւկեան պատերազմի, որը Գ. Խ. Սարգսեանն անուանում է հայ-ասորական պատերազմ: Պատմիչներ Դիոդորոսն ու Ապիանոսը, անդրադառնալով այս պատերազմին, գրում են, որ Արտաշէսը պարտուել է:[37] Միայն շնորհիւ պատմիչ Հիերոնիմոսի մի վկայութեան յայտնաբերման, որը կատարեց Գ. Խ. Սարգսեանը, հնարաւոր դարձաւ պարզել, թէ ինչ է տեղի ունեցել իրականում: Ահա թէ ինչ է գրում վերջինս՝ ընդհանուր յայտարարի բերելով յայտնաբերուած բոլոր այդ վկայութիւնները. «Պորփիւրը Հիերոնիմոսի պահպանուած հատուածի մէջ յայտնում է, որ Անտիոքոսը «շարունակում է արշաւանքը Հայաստանի թագաւոր Արտաշէսի դէմ... եւ կոտորելով շատերին՝ հաստատում իր վրանը Ափեգոն կոչուած վայրում, որ գտնւում է երկու լայնահուն գետերի՝ Տիգրիսի եւ Եփրատի միջեւ»[38]: Յաղթելուց յետոյ Հայաստանից Սելեւկեան արքայի անյապաղ հեռանալու հանգամանքն է, որ մնում էր անհասկանալի, քանի դեռ ասպարէզում չկար Հիերոնիմոսի այս յոյժ կարեւոր վկայութիւնը: Իր մեկնաբանութիւնն այս հարցի վերաբերեալ Գ. Խ. Սարգսեանն իրաւացիօրէն աւարտում է այսպէս. «... հետաքրքրական է նաեւ, որ Անտիոքոսը իր «վրանը», այսինքն՝ ճամբարը, ճակատամարտից յետոյ խփել է ոչ թէ Հայաստանում, ինչպէս կը սպասուէր յաղթարշաւից յետոյ, այլ Հայաստանից եւ նոյնիսկ նրա հարաւային ծայրամասը կազմող Տմորիքից շատ հեռու՝ Միջագետքում... Եզրակացնում ենք, որ Արտաշէսին, թէեւ մեծ կորուստների գնով, յաջողուել էր ետ մղել սելեւկեան զօրքերի յարձակումը»[39]:

Ինչ վերաբերում է Մեծ Հայքի արեւմտեան տարածքների վերամիաւորմանը, ապա այստեղ եւս ամէն ինչ ընթացել է հարթ, առանց ռազմական բախումների: Այսպիսի եզրայանգում կարելի է կատարել այն պարզ պատճառով, որ մատենագիրները ոչինչ չեն վկայում այդ կապակցութեամբ եւս: Աւելին՝ հայոց արքան այստեղ հանդէս էր գալիս որպէս հաշտարար միջնորդ: Ինչ վերաբերում է Հռոմէական հանրապետութեանը, ապա վերջինս դեռ չէր հասցրել հիմնաւորապէս ամրապնդուել այստեղ՝ Փոքր Ասիայում, ուստի եւ ձեռնպահ մնաց որեւէ միջամտութիւնից:

Դժուար չէ տեսնել, որ Արտաշէսը հին աշխարհի այն նշանաւոր թագաւորներից մէկն էր, որը ոչ միայն մարմնաւորում էր մեծ բարենորոգչին բնորոշ առանձնայատկութիւնները, այլեւ շնորհալի զօրահրամանատար էր: Մինչհելլենիստական դարաշրջանում այսպիսի երկակի առանձնայատկութիւններով օժտուած էին միայն քչերը՝ Սարգոն Ա Աքքադացին, Բաբելոնի արքայ Համմուրապին, Թիգլատպալասար Գ-ը, որոշ վերապահումներով Դարեհ Ա-ը, բարենորոգիչ Սոլոնը եւ բռնապետ (տիրան) Պիսիստրատը՝ Աթենքում: Իսկ այնպիսի հռչակ վայելող պետութիւն, ինչպիսին Եգիպտոսն էր, իր պատմութեան բոլոր հինգ թագաւորութիւնների ընթացքում գուցէ եւ չունեցաւ այդպիսի գոնէ մէկ անհատականութիւն: Թութմոսիս Գ-ը եւ Ռամզէս Բ-ը յաջողակ նուաճողներ էին, իսկ Էխնաթոնը, Տեֆնախտը, Բոկխորիսը եւ միւսները՝ բարենորոգիչներ: Հելլենիզմի արմատաւորումը էապէս փոխեց ընդունակութիւնների այն ցուցակը, որը պահանջւում էր նշանաւոր միապետերից: Ռազմա-քաղաքական եւ վարչական ընդունակութիւնների համակողմանի դրսեւորումներով առաջինն աչքի ընկաւ հէնց ինքը՝ հելլենիզմի «ճարտարապետ» Ալեքսանդր Մակեդոնացին: Նրան յաջորդած մի շարք թագաւորներ Եգիպտոսում, Սելեւկեան պետութիւնում, Հնդկաստանում, Պոնտոսում, Յունա-Բակտրիական պետութիւնում եւ այլուր աչքի ընկան հէնց այդպիսի ընդունակութիւններով: Նոյնիսկ հեռաւոր Չինաստանում, որը շատ հեռու էր հելլենիստական համակարգի պետութիւններից, վերոյիշեալ առումներով աչքի ընկաւ Ին Զժենը կամ Ցին Շիհուանդին

35 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Ա (Ե-ԺԲ դար), Եր., 1934, էջ 158

36 Նոյն տեղում, էջ 160

37 Տե՛ս *Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Հին յունական աղբիւրներ Բ*, **Դիոդորոս Սիկիլիացի**, XXXI, 17a, թարգ. բնագրից **Ս. Մ. Կրկեաշարեանի**, Երեւան, 1985, Appian, op. cit, Syr, 45:

38 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 548 (հեղ. **Գ. Խ. Սարգսեան**)

39 Նոյն տեղում, էջ 548

© National Library of Armenia

(Ք.ա. 221-207 թթ.): Հին Հայաստանում այս ամէնի առաջին իրականացնողն հանդիսացաւ Արտաշէս Ա-ը, որի անունն ու գործը, թւում էր, թէ առայժմ մնացել են ստուերում: Դա երեւի պայմանաւորուած էր Տիգրան Մեծի՝ միջազգային ասպարէզում ունեցած անսահման հեղինակութեամբ, որի հետեւանքով էլ Արտաշէսին առանձնայատուկ ուշադրութիւն չէր յատկացւում, եւ նա ինչ-որ տեղ յայտնուել էր ստուերում:

Փաստօրէն, ինչպէս պարզ երեւում է վերոյիշեալ շարադրանքից, շնորհիւ Խորենացու եւ անտիկ պատմագրութեան մի խումբ մատենագիրների, ընդհանուր առմամբ, մեզ բաւականին ծանօթ է Արտաշէսի ծաւալած գործունէութիւնը՝ սկսած 201 թուականից: Թէ ինչպիսին է եղել մինչ այդ պահը Արտաշէսի դերակատարութիւնը, մնում է անյայտ: Երեւի, ինչպէս այս (խօսքը պրոֆեսիոնալ բանակի ստեղծման մասին է), այնպէս էլ նրա ծաւալած եւ իրականացրած իմաստուն եւ հաւասարակշռուած քաղաքականութեան միւս բազմաթիւ քայլերի մասին յիշողութեան արդիւնքն էր նրա անուան շուրջ ժողովրդական վէպի՝ աւանդազրոյցի յօրինումը, որին արժանացել են միայն իր նման ամենաերեւելիները (Սարգոն I Աքքադացին կամ Հինը, Կիւրոս Մեծը, Հռոմուլոսը...)[40]:

Արտաշէսն իրաւամբ հին աշխարհում կառավարած արքաներից առաջինն էր, որ արդարացիօրէն վաստակեց Բարեպաշտ, հին յունարէն eusebes մականունը, իսկ նրա յուղարկաւորութիւնը վերածուեց համաժողովրդական սգի: Խորենացին գրում է. «... եւ զգահոյիւքն շուրջ՝ որդիքն եւ բազմութիւն ազգականացն, եւ առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, ...բազմութիւն ռամկին»[41]: Ինչո՞վ է հետաքրքիր Պատմահօր այս վկայութիւնը. Արտաշէսին թաղել են այնպէս, ինչպէս վայել է ոչ միայն արքային, այլեւ բարձրաստիճան զինուորականին, քանզի թափորում մեծամասնութիւն են կազմել հէնց վերջիններս, եւ այն ուղեկցուել է զօրական նուագախմբի նուագակցութեամբ:

40 Տե՛ս Խորենացի, Բ, լէ. Նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 528-529 (հեղ. Գ. Խ. Սարգսեան):

41 Խորենացի, Բ, կ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ II ԵՒ III ԴԱՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Բաբկէն Յարութիւնեան

Հայոց պատմութեան II եւ III դարերի ժամանակագրութիւնը հայագիտութեան առաւել կնճռոտ խնդիրների թուին է պատկանում, քանի որ սկզբնաղբիւրների կցկտուր տեղեկութիւնների պատճառով ամէն մի ուսումնասիրող իւրովի է մօտեցել դրա լուսաբանմանը եւ տուել փաստօրէն այդ ժամանակագրութեան սեփական մեկնաբանութիւնը: Անշուշտ, մեր լուծումներն ու եզրակացութիւնները միշտ չէ, որ անվերապահօրէն ընդունելի կը լինեն հետազօտողների համար, սակայն մենք վստահ ենք, որ առկայ աղբիւրագիտական հիմքի պայմաններում դրանք մօտ են իրականութեանը, իսկ շատ դէպքերում պարզապէս բացայայտում են իրերի պատմական կացութիւնը:

Մեր քննութիւնը սկսում ենք II դարի վերջերից, երբ Մեծ Հայքում թագաւորեց Վաղարշ Բ թագաւորը: Պատմահայր Մովսէս Խորենացին նրա մասին գրում է. «Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսներորդի եւ երկրորդի ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի: Սա չինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին. ուր ի գնալ մօր իւրոյ ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատահեալ երկանց ի գնացսն՝ ծնաւ ի վերայ ճանապարհին, ի գաւառին Բասենոյ, ի տեղւոջն, ուր խառնին Մուրց եւ Երասխ. զոր չինեաց յիւր անուն եւ կոչեաց Վաղարշաւան: Սա պատեաց պարսպաւ եւ զհզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ. զորմէ յառասպելսն ասեն. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»: Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ չինեաց զաւանս զայս. յորում եւ Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղեւ քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հզօր պատուարաւ, եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ Նոր քաղաք:

Սա թագաւորեալ ամս քսան, մեռաւ: Թէ լոկ եւ այլքն կեցին, բայց ասեմ զսայ եւ յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն: Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զԽազրաց ասեմ եւ զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանեն, առաջնորդ եւ թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրհապ. որք անցեալ վտարին այսր զԿուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ եւ արամբք մարտկօք՝ ցիր դիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, եւ ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն Ճորայ: Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ. զորս թէպէտ եւ վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց:

Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով զմահուանն հօրն.

© National Library of Armenia